Քեթիվ

Քեթի բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1753,05 հա, բնակչությունը 976 մարդ: Քեթի բնակավայրը գտնվում է Շիրակի մարզի Ախուրյանի նախկին տարածաշրջանում՝ Երևան-Գյումրի-Վրաստան միջպետական ավտոճանապարհի վրա: Բարձրությունը ծովի մակարդակից 1750մ: Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ, գրադարան, մանկապարտեզ: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հնագիտական բարձր արժեք ներկայացնող նյութեր, որոնք պահպանվում են տարբեր թանգարաններում: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ՝ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի, բանջարաբոստանային կուլտուրաների և մրգերի արտադրությամբ: Գյուղում գործում է դպրոցը, մանկապարտեզը, գրադարանը: